# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.08.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/51**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա. Գևորգյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 03Ա1015324)

Ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 15.07.2019թ.)

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչ՝ Ռ. Եգանյանի (լիազորագիր, տրված՝ 18.07.2019թ.)

քննելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար գործառնական հաշվառումների ծրագրային ապահովման ներդրման, էլեկտրոնային արխիվացման ծրագրի ներդրման, աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում

«Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից 11.07.2019թ. ներկայացված և 12.07.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/51 բողոք), պարզեցի հետևյալը.

**1. «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 11.07.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին 16.05.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն և 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /16.05.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 55 000 ՀՀ դրամ:

Իսկ արդեն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 55 000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը հայտնել է, որ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարների գծով:

Նախ, պետք է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարն ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Սակայն «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում բացահայտվել է, որ Ընկերությունն ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

Միևնույն ժամանակ «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքի համաձայն՝ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն-ներ չունի: Եվ պետք է նշել, որ Ընկերության միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ: Միևնույն ժամանակ, «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքում վկայակոչված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի դեռևս 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանը:

Միևնույն ժամանակ, «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին):

Ընկերությունը հայտնել է, որ որևիցե եղանակով երբևիցե չի ծանուցվել «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված

վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով առկա պարտավորության առկայության մասին: Փաստացիորեն առկա է եղել արձանագրված պարտավորության մասով «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի իրազեկված չլինելու հանգամանքը, քանզի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ կարող էր ստանալ միայն «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի»-ից, իսկ ինչպես արդեն նշվել է, նշված քարտի տվյալների համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրը չունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով որևէ պարտավորություն:

Ընկերությունը գտնում է, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի կողմից 08.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.3 կետով կայացված՝ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը.

2. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

Ի լրումն բողոքի 22.07.2019թ. ներկայացրած գրությամբ Ընկերությունը հայտնել է, որ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից 18.07.2019թ. հարցում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ, որով

Ընկերությունը խնդրել էր հայտնել՝ 16.05.2019թ. առկա 55.000 ՀՀ դրամ պարտքը՝ դրոշմանիշների վճարման գծով, երբ է առաջացել և որ ժամանակահատվածի համար:

Ի պատասխան վերը նշված հարցման՝ ՀՀ ՊԵԿ-ը 18.07.2019թ. տրամադրած թիվ 1379 գրությամբ պատասխանել է, որ 16.05.2019թ. դրությամբ ընկերության դրոշմանիշային վճարի գծով ժամկետանց պարտքը կազմել է 55.000 ՀՀ դրամ, որը վերաբերում է 2018թ. օգոստոսից-դեկտեմբեր և 2019թ. հունվարից-մարտ ամիսների հաշվարկներին, իսկ դրոշմանիշային վճարի հաշվարկման համար հիմք է հանդիսացել կազմակերպության կողմից հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական հաշվարկները:

Այն ժամանակ, երբ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն տեղեկացել է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը մերժելու մասին և այն թե ինչ հիմքով է մերժվել հայտը՝ այց է կատարել Ընկերության հաշիվները սպասարկող «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի «Գյումրի» մասնաճյուղ և խնդրել աշխատակցին ներկայացնել «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից բանկի մասնաճյուղի կողմից կատարված փոխանցումների համապատասխան վճարային հանձնարարական-ները:

Հանձնարարականների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից 2018թ. օգոստոսի 17-ին, սեպտեմբերի 8-ին, հոկտեմբերի 9-ին, նոյեմբերի 14-ին, դեկտեմբերի 12-ին, 2019թ. հունվարի 14-ին, 2019թ. հուլիսի 2-ին կատարվել են դրոշմանիշային վճարների գծով վճարումները, որը հավաստվում է նաև սույն լրացմանը կցվող վճարային հանձնարարականներով, որտեղ որպես գործարքի նպատակ նշվել է Դրոշմանիշային վճար, սակայն կամ «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կամ Կենտրոնական գանձապետարանի անփույթ և անհետևողական աշխատանքի արդյունքում դրոշմանիշային վճարի գծով կատարված վճարումները չեն փոխանցվել համապատասխան հաշվեհամարին:

Այս պարագայում Ընկերությունը գտնում է, որ արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, քանի որ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետներում կատարել է դրոշմանիշային

վճարների գծով վճարումները, սակայն փաստացիորեն առկա է եղել արձանագրված «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կամ Կենտրոնական գանձապետարանի անփույթ աշխատանքի հետևանք:

Ընկերությունը հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի վիճարկվող չափաբաժնի 1 և 2 տեղերը զբաղեցրած մասնակիցների գնային առաջարկների տարբերությունը կազմում է 4,950,000 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով բողոքով, բողոքի վերաբերյալ կատարված լրացումով և «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի «Գյումրի» մասնաճյուղի կողմից տրամադրած վճարային հանձնարարականներով՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2019/51 բողոքը բավարարել:

«Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

**<u>2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.07.2019թ. թիվ 09/1348 գրությամբ ներկայացրել է բողոքի քննության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Պատվիրատուն նույն գրությամբ հայտնել է, որ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները՝

1. «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 16.05.2019թ.-ին «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ:

2. «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի արձանագրության թիվ 4 որոշմամբ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

3. «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի արձանագրության թիվ 4 որոշմամբ, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների, այդ թվում նաև «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի համապատասխան տվյալները հարցման տեսքով 21.06.2019թ. ներկայացվել են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

4. Հարցման շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից 26.06.2019թ. ստացված տեղեկատվության համաձայն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Ռեսալ Սոֆտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ժամկետանց պարտավորությունները կազմել են 55000 (հիսունհինգ հազար) ՀՀ դրամ: «Ռեսալ Սոֆտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված՝ շտկման նպատակով ներկայացրել է հիմնավորող փաստաթղթեր, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 11 բաժնի կողմից 02.07.2019թ.-ին տրամադրված թիվ 1315 տեղեկանքը, որտեղ հստակ նշված է, որ «Ռեսալ Սոֆտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 16.05.2019թ. հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ, որոնք գերազանցում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով սահմանված շեմը:

5. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը, «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2019թ. նիստի արձանագրության թիվ 6 որոշմամբ, «Ռեսալ Սոֆտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը մերժվել է:

Հայտի մերժման իրավական հիմքերը՝

1. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

2. Նույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

4. Նույն կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա

ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից.

5. «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ կետի 2.1 ենթակետի 2-րդ պարբերությամբ սահմանված է՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

6. «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 21.06.2019թ. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման տեքստում սահմանված է՝ խնդրում ենք ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով սահմանված ժամկետում տրամադրել տեղեկատվություն 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ նույն կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ:

7. «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8-րդ հավելվածով սահմանված է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացվող տեղեկատվության օրինակելի ձևաչափը, համաձայն որի տեղեկատվությունը տրամադրվում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափի վերավերյալ:

8. «Ռեսալ Սոֆտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով, որի համար ներկայացված գնային առաջարկը կազմում է 52000000 (հիսուներկու միլիոն) ՀՀ դրամ: Համաձայն ՀՀ ՊԵԿ տեղեկատվության, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Ռեսալ Սոֆտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների գումարի չափը կազմում է 55000 (հիսունհինգ հազար) ՀՀ դրամ, որը գերազանցում է հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը:

9. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալի 03.05.2019թ.-ի թիվ 3-4/16805-2019 պարզաբանմամբ հստակ նշվում է, որ դրոշմանիշային վճարները հանդիսանում են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտներ, հետևաբար «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը չի սահմանում դրոշմանիշային վճարը՝ որպես բացառություն:

10. Միաժամանակ Պատվիրատուն գտնում է, որ բավարար գնահատելով «Ռեսալ Սոֆտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը, կխախտվեն հաջորդաբար տեղ զբաղեցնող մասնակցի շահերը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Պատվիրատուն խնդրել է «Ռեսալ Սոֆտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված բողոքը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 17.07.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ԳԲՔԱ-ՆԳ-2019/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.05.2019թ. հայտ է ներկայացրել «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 26.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 55 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից 11.07.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 17.07.2019թ. թիվ 09/1348 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.05.2019թ. հայտ է ներկայացրել «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 26.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 55 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն, մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԾՁԲ-2019/10-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 18.07.2019թ. թիվ 1379 գրությունը, համաձայն որի 16.05.2019թ. դրությամբ Ընկերության դրոշմանիշային վճարի գծով ժամկետանց պարտքը կազմել է 55 000 ՀՀ դրամ, որը վերաբերում է 2018թ. օգոստոսից դեկտեմբեր և 2019թ. հունվարից մարտ ամիսների հաշվարկներին:

Ընկերությունը ներկայացրել է նաև «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի համապատասխան վճարման հանձնարարականները, որոնց համաձայն՝ Ընկերության կողմից 2018թ. օգոստոսից 2019թ. հունվար ամիսները դրոշմանիշային վճարի գծով համապատասխան փոխանցումներն (ընդհանուր՝ 42 000 ՀՀ դրամ) իրականացվել են ոչ թե դրոշմանիշային վճարների համար նախատեսված «900005001186» հաշվեհամարին, այլ Կենտրոնական գանձապետարանի հարկերի միասնական «900008000490» հաշվեհամարին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ այնուամենայնիվ Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն, ուստի մերժելով Ընկերության հայտը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և առաջնորդվել Կարգի 44-րդ կետով:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ռեսալ Սոֆտ» ՍՊԸ-ի կողմից 11.07.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**